Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2023 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է համայնքում ծագած մի շարք խնդիրների առաջնահերթությամբ և դրանց համապատասխան լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Մասիս քաղաքի և 26 վարչական տարածքների մուտքերի և ելքերի մոտ տեղադրված թվով 49 տեսախցիկները գործարկելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ինտերնետ կապի ծառայություն, որի համար բյուջեի վարչական մասի ծախսերում անհրաժեշտ է նախատեսել 1 372 000 դրամ:

Ուսումնական տարվա ավարտով պայմանավորված համայնքի թվով 33 հանրակրթական դպրոցներում վերջին զանգի միջոցառումներին աջակցելու նպատակով անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 3 740 000 դրամ:

Մասիս համայնքի Ղուկասավան գյուղում տրանսպորտ չի գործում, որի պատճառով խաթարվել է բնակիչների բնականոն տեղաշարժը բնակավայրից բնակավայր: Նշյալ հարցով Մասիսի համայնքապետարան է դիմել նույն գյուղի բնակիչ Հարություն Գրիգորյանը և ցանկություն հայտնել իրեն սեփականության իրավունքով պատկանող միկրոավտոբուսով անվճար ապահովել բնակիչների տեղաշարժը: Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է Հ. Գրիգորյանի հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր 150 000 դրամ ամսական աշխատավարձով, տրանսպորտի հետ առաջացած ծախսերը հոգալու համար:

Ռանչպար բնակավայրում առկա թվով 12 արտեզյան հորերը գտնվում են անմխիթար վիճակում: Հորերի հիմնանորոգման համար անհրաժեշտ է պատվիրել նախագծանախահաշվային աշխատանքների և փորձաքննության փաթեթ, որի համար անհրաժեշտ է բյուջեի ֆոնդային մասի ծախսերում նախատեսել 660 000 դրամ:

Նոր Կյուրին գյուղի ջրահեռացման համակարգի կառուցման համար ձեռք բերված նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթը անհրաժեշտ է լրամշակել, որի համար բյուջեի ֆոնդային մասում պետք է նախատեսել 100 000 դրամ:

Համայնքային մի շարք ծրագրեր իրականացնելու համար 2022թ. ձեռք են բերված նախագծանախահաշվային փաթեթներով կատարվել են գնման գործընթացներ, որի արդյունքում կնքված պայմանագրերով կապիտալ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեի ֆոնդային մասում ներառել ընդհանուր 10 348 200 դրամ, որից՝

- Մասիս համայնքի Արևաբույր բնակավայրի արցախյան պատերազմում զոհվածներին նվիրված հուշապատի կառուցման և տարածքի բարեկարգման համար 6 220 200 դրամ
- Մասիս համայնքի Զորակ բնակավայրի «Մանուկների աշխարհ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խաղահրապարակի բարեկարգման համար՝ 4 128 000 դրամ:
- Մասիս քաղաքի հանրապետության և Երևանյան փողոցների լուսավորության ցանցի վերակառուցման աշխատանքների համար բյուջեում նախատեսված միջոցները նվազեցնել 13388.2 հազար դրամ, այն ուղղելով նախատեսվող կապիտալ ծախսերին:

Համայնքում գործող թվով 6 բժշկական ամբուլատորիաների տնօրենները դիմել են համայնքին աջակցելու՝ մասնագիտական որակյալ հետազոտություն կազմակերպելու նպատակով էլեկտրասրտագրության սարքեր ձեռք բերելու համար: Սարքերի ձեռք բերման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 2 280 000 դրամ:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի նվազեցումների և ավելացումների							
Հազար դրամ							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի Ծախսեր*
				Ծախսեր			
1	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ինտերնետ կապի ծառայություն վարչական տարածքների մուտքերի և ելքերի մոտ տեղադրված տեսախցիկների տեսանելիության համար	**4214**	1372,0	
2	04	2	4	**Ոռոգում.**Ռանչպար բնակավայրի թվով 12 արտեզյան հորերի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	**5134**		600,0
3				փորձաքննություն	**5134**		60,0
4	06	3	1	**Ջրամատակարարում.**Նոր Կյուրին բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթի լրամշակում	**5134**		100,0

5	06	4	1	**Փողոցների լուսավորում.**ք. Մասիս Հանրապետության և Երևանյան փողոցների լուսավորության ցանցի վերակառուցման աշխատանքներ	**5113**		-13388,2
6	07	6	1	**Առողջապահություն.**Էլեկտրասրտագրության սարքերի ձեռք բերում	**5129**		2280,0
7	**08**	**2**	**4**	**Այլ մշակութային կազմակերպություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	**4239**	-3740,0	
8	**08**	**2**	**7**	**Հուշարձանների և մշակութային այլ արժեքների պահպանում.**Արևաբույր բնակավայրում արցախյան պատերազմում զոհվածներին նվիրված հուշապատի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	**5112**		6220,2
9	**09**	**1**	**1**	**Նախադպրոցական կրթություն.**Զորակ բնակավայրում «Մանուկների աշխարհ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խաղահրապարակի բարեկարգում	**5113**		4128,0
10	**09**	**2**	**2**	**Միջնակարգ կրթություն.**Համայնքում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին նվիրատվություն «Վերջին զանգ» միջոցառման համար	**4819**	3740,0	
11	**11**	**1**	**2**	**Համայնքների պահուստային ֆոնդ.**Պահուստային ֆոնդ	**4891**	-1372,0	
				Ընդամենը		***0,00***	***0,00***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ